



Բարիս Ղարսայանը ծնվել է 1952թ մայիսի 1-ին Տավուշի շրջանի Այգեծոր գյուղում : Ութնամյա կրթությունը ստացել է գյուղի դպրոցում: Տեղափոխվել է Չարենցավանի պրոֆտեխ ուսումնարան սովորելու: 1970-1972թթ ծառայել է Խորհրդային Բանակում` Գերմանիայում : Վերադառնալուց հետո ամուսնացել է և տեղափոխվել Բյուրեղավան: 12 տարի աշխատել է «Բյուրեղապակի» գործարանում որպես մեքենավար: «Հայկապշին» տրեստում ավտովարորդ էր , երբ սկսվեց Ղարաբաղյան պատերազմը: Շարժման առաջին օրվանից մասնակցել է Գորիսի ,Կապանի , Նոյեմբերյանի սահմանամերձ գյուղերի պաշտպանությանը: Այնուհետև թշնամուց բռնագրված տարբեր զենք զինամթերքներով իր ջոկատով վերադառնում է Տավուշի մարզի Այգեծոր գյուղ` ջոկատը համալրելով գյուղի քաջ տղաներով: Բարիս Ղարսայանը եղել է Այգեծոր գյուղի երկրապահ կամավորական ջոկատի հրամանատար: 1992թ դեկտեմբերի 29-ին վաղ առավոտյան թուրքերը մեծ զորքով հարձակվում են Չինար գյուղի վրա: Բարիս Ղարսայանը իր ջոկատով օգնության է հասնում Չինարի մարտիկներին , մինչև լուսաբաց թեժ կռիվ է մղվում , արդյունքում թշնամու 43 զոհի դիմաց մենք ունենում ենք 4 զոհ , որից մեկը հրամանատարն էր` Բարիս Ղարսայանը: Նա հեռացավ իր հետևից թողելով կնոջն ու երեք երեխաներին , որոցից փոքր որդին հաշմանդամ է: Մահվանից օրեր անց Բարիսի կինը գրում է բանաստեղծություն` նվիրելով Չինարի գյուղում զոհված Այգեծորցի 4 հայրորդիներին:

Սուգ է այսօր Այգեծորում` չորս զոհ միայն մեկ օրում :

Սև շոր հագան չորս կին , չորս մայր, չորս լույս հանգավ մեկ օրում:

Առավոտից սոված-ծարավ, դուք գնացիք կռվելու,

Մինչև լույս դուք կռվում էիք , առանց դադար առնելու:

Աչքիդ առաջ արնաթաթախ տղաներդ ընկան ցած,

Դու գորացիր `«Բա ինչ կասեմ Ձեր տերերին տղաներ»:

Առանց երկար մտածելու, ցավը սրտում քո որդու ,

Ընկերներիդ ցավը սրտում , անվախ ելար դու մարտի:

Դու գիտեիր , որ գնում ես դեմ հանդիման քո մահվան ,

Դու գիտեիր քաջ ֆիդայի , հենց առաջին օրվանից:

Չթողեցիք խուժան թուրքին ոտք դնելու մեր հողին,

Ձեր սեփական կյանքով փրկիք , մի բուռ հողը հայրենի: